**Երկրորդ ընթերցում**

**Լրամշակված նախագիծ**

**Կ-232[27]-11.04.2022-ՊԻ-011**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ**

**Օ Ր Ե Ն Ք Ը**

**«ՓԱՍՏԱԲԱՆՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ**
**ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ»**

**Հոդված 1.** «Փաստաբանության մասին» 2004 թվականի դեկտեմբերի 14-ի ՀՕ-29-Ն օրենքի (այսուհետ՝ Օրենք) 5-րդ հոդվածի 2-րդ մասի 3-րդ կետում և 4-րդ մասում «գործերով» բառը փոխարինել «վարույթներով» բառով:

**Հոդված 2.** Օրենքի 17-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետից հանել «հետաքննության կամ» բառերը:

**Հոդված 3.** Օրենքի 18-րդ հոդվածի 2-րդ մասի՝

1) 4-րդ կետում «ովքեր, ենթադրվում է, որ» բառերը փոխարինել «որոնք ենթադրաբար» բառերով, իսկ «գործին» բառից հետո լրացնել «կամ վարույթին» բառերը.

2) 5-րդ կետում «մասնագետներ ներգրավելու՝» բառերը փոխարինել «ներգրավելու մասնագետ կամ թարգմանիչ՝» բառերով, իսկ «պարզաբանելու» բառից հետո լրացնել «կամ թարգմանություն կատարելու» բառերը:

**Հոդված 4.** Օրենքի 20-րդ հոդվածում՝

1) 2-րդ մասում՝

ա. 2-րդ կետի «գործին» բառից հետո լրացնել «կամ քրեական վարույթին» բառերը, իսկ «աշխատող» բառը փոխարինել «աշխատակից» բառով.

բ. 3-րդ կետի «գործի քննությանը» բառերը փոխարինել «վերաբերյալ գործի կամ վարույթի քննությանը» բառերով.

գ. 4-րդ կետի «գործում» բառից հետո լրացնել «կամ վարույթում» բառերը.

2) 7-րդ մասում «հանձնել գործին» բառերից հետո լրացնել «կամ վարույթին» բառերը:

**Հոդված 5.** Օրենքի 21-րդ հոդվածում՝

1) 3-րդ մասի «դատական մարմիններում» բառերը փոխարինել «դատարաններում» բառով, իսկ «Պետական և դատական մարմիններն» բառերը՝ «Պետական մարմինները, դատարաններն» բառերով.

2) 4-րդ մասի «և բերման ենթարկվել» բառերը փոխարինել «ենթարկվել» բառով:

**Հոդված 6.** Օրենքի 23-րդ հոդվածում 3-րդ մասում՝

1) 1-ին կետի «դատարանում կամ մինչդատական վարույթում քննչական կամ դատավարական» բառերը փոխարինել «նախաքննության ընթացքում կամ դատարանում քննչական կամ այլ վարութային» բառերով.

1) 2-րդ կետի «քննչական կամ» բառերից հետո լրացնել «այլ» բառը:

**Հոդված 7.** Օրենքի 39-րդ հոդվածի 2-րդ մասը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«Ի վնաս փաստաբանի վստահորդի ընդունված դատական ակտն ինքնին չի առաջացնում փաստաբանի կարգապահական պատասխանատվություն:»:

**Հոդված 8.** Օրենքի 41-րդ հոդվածում՝

1) 2-րդ մասի 2-րդ կետում «քրեական» բառից հետո լրացնել «վարույթներով» բառը.
2) 3-րդ մասի «գործով մինչդատական վարույթում» բառերը փոխարինել «վարույթներով նախաքննության ընթացքում» բառերով.
3) 4-րդ մասի «գործերով վարույթն» բառերը փոխարինել «վարույթն» բառով.
4) 5-րդ մասի «գործով կասկածյալին» բառերը փոխարինել «վարույթի շրջանակներում ձերբակալված անձին» բառերով.
5) լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր՝ 7-րդ մաս.

«7. Քրեական վարույթի շրջանակներում մեղադրյալին կամ տուժողին ցույց տրված իրավաբանական օգնության վճարման համար պետության կատարած ծախսերը բռնագանձելու հարցը լուծելու ժամանակ ակնհայտ վճարունակ է համարվում այն անձը, որն ունի նվազագույն ամսական աշխատավարձի կրկնապատիկը գերազանցող ամսական եկամուտ կամ բացի անձնական բնակարանից, որպես սեփականություն ունի այլ անշարժ գույք կամ նվազագույն աշխատավարձի հազարապատիկը գերազանցող արժեքի փոխադրամիջոց կամ այլ թանկարժեք գույք:»:

**Հոդված 9.** Սույն օրենքն ուժի մեջ է մտնում «Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգիրք» 2021 թվականի հունիսի 30-ի ՀՕ-306-Ն օրենքի ուժի մեջ մտնելու օրը:

**ՏԵՂԵԿԱՆՔ**

**«ՓԱՍՏԱԲԱՆՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ**
**ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ»**
**ՕՐԵՆՔԻ ՆԱԽԱԳԾՈՒՄ (Կ-232[27]-11.04.2022-ՊԻ-011/1) ԿԱՏԱՐՎԱԾ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ**

*Առաջին ընթերցում*

*Կ-232[27]-11.04.2022-ՊԻ-011/1*

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ**
**Օ Ր Ե Ն Ք Ը**

**«ՓԱՍՏԱԲԱՆՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ**
**ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ»**

**Հոդված 1.** «Փաստաբանության մասին» 2004 թվականի դեկտեմբերի 14-ի ՀՕ-29-Ն օրենքի (այսուհետ՝ Օրենք) 5-րդ հոդվածի 2-րդ մասի 3-րդ կետում և 4-րդ մասում «գործերով» բառը փոխարինել «վարույթներով» բառով:

**Հոդված 2.** Օրենքի 17-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետից հանել «հետաքննության կամ» բառերը:

**Հոդված 3.** Օրենքի 18-րդ հոդվածի 2-րդ մասի՝

3) 4-րդ կետում «ովքեր, ենթադրվում է, որ» բառերը փոխարինել «որոնք ենթադրաբար» բառերով, իսկ «գործին» բառից հետո լրացնել «կամ վարույթին» բառերը.

4) 5-րդ կետում «մասնագետներ ներգրավելու՝» բառերը փոխարինել «ներգրավելու մասնագետ կամ թարգմանիչ՝» բառերով, իսկ «պարզաբանելու» բառից հետո լրացնել «կամ թարգմանություն կատարելու» բառերը:

~~**Հոդված 4.** Օրենքի 19-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետից հանել «, բացառությամբ այն դեպքերի, երբ փաստաբանը համոզված է պաշտպանյալի ինքնազրպարտության մեջ, հակառակ պաշտպանյալի դիրքորոշման՝ չընդունել դեպքի հետ նրա առնչությունը և մեղավորությունը» բառերը:~~

~~**Հոդված 5.** Օրենքի 20-րդ հոդվածում՝~~

**Հոդված 4.** Օրենքի 20-րդ հոդվածում՝

3) 2-րդ մասում՝

ա. 2-րդ կետի «գործին» բառից հետո լրացնել «կամ քրեական վարույթին» բառերը, իսկ «աշխատող» բառը փոխարինել «աշխատակից» բառով.

բ. 3-րդ կետի «գործի քննությանը» բառերը փոխարինել «վերաբերյալ գործի կամ վարույթի քննությանը» բառերով.

գ. 4-րդ կետի «գործում» բառից հետո լրացնել «կամ վարույթում» բառերը.

~~4) 3-րդ մասը շարադրել հետևյալ խմբագրությամբ.~~

~~«Փաստաբանն իրավունք չունի հրապարակելու վստահորդի կողմից իրավաբանական օգնություն ցույց տալու կապակցությամբ իրեն հայտնած տեղեկությունները՝ առանց վստահորդի համաձայնության:».~~

~~5)~~4)7-րդ մասում «հանձնել գործին» բառերից հետո լրացնել «կամ վարույթին» բառերը:

**Հոդված ~~6~~5.** Օրենքի 21-րդ հոդվածում՝

3) 3-րդ մասի «դատական մարմիններում» բառերը փոխարինել «դատարաններում» բառով, իսկ «Պետական և դատական մարմիններն» բառերը՝ «Պետական մարմինները, դատարաններն» բառերով.

4) 4-րդ մասի «և բերման ենթարկվել» բառերը փոխարինել «ենթարկվել» բառով:

**Հոդված ~~7~~6.** Օրենքի 23-րդ հոդվածում 3-րդ մասում՝

2) 1-ին կետի «դատարանում կամ մինչդատական վարույթում քննչական կամ դատավարական» բառերը փոխարինել «նախաքննության ընթացքում կամ դատարանում քննչական կամ այլ վարութային» բառերով.

2) 2-րդ կետի «քննչական կամ» բառերից հետո լրացնել «այլ» բառը:

**Հոդված ~~8~~7.** Օրենքի 39-րդ հոդվածի 2-րդ մասը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«Ի վնաս փաստաբանի վստահորդի ընդունված դատական ակտն ինքնին չի առաջացնում փաստաբանի կարգապահական պատասխանատվություն:»:

**Հոդված ~~9~~8.** Օրենքի 41-րդ հոդվածում՝

6) 2-րդ մասի 2-րդ կետում «քրեական» բառից հետո լրացնել «վարույթներով» բառը.

7) 3-րդ մասի «գործով մինչդատական վարույթում» բառերը փոխարինել «վարույթներով նախաքննության ընթացքում» բառերով.

8) 4-րդ մասի «գործերով վարույթն» բառերը փոխարինել «վարույթն» բառով.

9) 5-րդ մասի «գործով կասկածյալին» բառերը փոխարինել «վարույթի շրջանակներում ձերբակալված անձին» բառերով.~~:~~

10) լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր՝ 7-րդ մաս.

«7. Քրեական վարույթի շրջանակներում մեղադրյալին կամ տուժողին ցույց տրված իրավաբանական օգնության վճարման համար պետության կատարած ծախսերը բռնագանձելու հարցը լուծելու ժամանակ ակնհայտ վճարունակ է համարվում այն անձը, որն ունի նվազագույն ամսական աշխատավարձի կրկնապատիկը գերազանցող ամսական եկամուտ կամ բացի անձնական բնակարանից, որպես սեփականություն ունի այլ անշարժ գույք կամ նվազագույն աշխատավարձի հազարապատիկը գերազանցող արժեքի փոխադրամիջոց կամ այլ թանկարժեք գույք:»:

**Հոդված ~~10~~9.** Սույն օրենքն ուժի մեջ է մտնում «Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգիրք» 2021 թվականի հունիսի 30-ի ՀՕ-306-Ն օրենքի ուժի մեջ մտնելու օրը: